



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**ASU** THE MELIKIAN CENTER:  
Russian, Eurasian & East European Studies  
ARIZONA STATE UNIVERSITY



## Ղարաբաղյան հիմնահարցի լուծումն ըստ Հայաստանի և Ադրբեջանի կանանց ընկալումների

**Աննա Սարկիսյան**

- ✉ *Anna Sarkisyan*
- ✉ *Center for Gender and Leadership Studies*

*Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

**Երևան 2014**

## Ղարաբաղյան հիմնահարցի լուծումն ըստ Հայաստանի և Ադրբեջանի կանանց ընկալումների

### Հետազոտության համառոտ ակնարկ

Հետազոտությունն անդրադարձ է կատարել Հայաստանի և Ադրբեջանի կանանց և տղամարդկանց ընկալումներին Ղարաբաղյան հիմնահարցի լուծման վերաբերյալ: Երկու հետազոտական հարց է առաջադրվել. 1. Որո՞նք են Ղարաբաղյան հակամարտության լուծմամբ մտահոգված հայաստանաբնակ և ադրբեջանաբնակ կանանց սոցիալ-տնտեսական բնութագրիչները: 2. Ինչպե՞ս են դրանք տարբերվում հայաստանաբնակ և ադրբեջանաբնակ տղամարդկանց բնութագրիչներից:

Հետազոտության հիմքում ընկած է Կովկասյան բարոմետր 2011 տվյալների շտեմարանը, որը ֆիլտրվել է այն կերպ, որպեսզի ընդգրկի ողջ անհրաժեշտ տեղեկությունը: Հիպոթեզը կառուցվել է NK4 հարցի շուրջ. Ձեր կարծիքով, որքանով հավանական է լուծել Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում խաղաղ ճանապարհով կամ ուժի կիրառմամբ: Հետազոտվել են միայն այն հարցվածները, որոնք պատասխանել են առաջադրված տարբերակներից մեկին՝ խաղաղությամբ կամ ուժի կիրառմամբ: Հարցի պատասխանները խմբավորվել են երկու տարբերակների՝ հավանական է կամ անհավանական է, որի արդյունքում ներմուծվել է նոր փոփոխական: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է 1407 հարցված Հայաստանում և 1028՝ Ադրբեջանում: Ուսումնասիրության համար կիրառվել է IBM SPSS Statistics 22 տարբերակը:

Հետազոտության համար կիրառվել է երկաստիճան քլաստերային վերլուծության գործիքը հետևյալ յոթ փոփոխականների համար՝ կրթական մակարդակ, ընտանիքում երեխաների իդեալական թվի պատկերացումներ, ամուսնական կարգավիճակ, անձնական եկամուտի մակարդակ, տնային տնտեսության անդամների թիվ, զբաղվածության մակարդակ և տարիք, դուրս բերելու կանանց և տղամարդկանց տիպական կերպարը, որոնք Ղարաբաղյան հիմնահարցի լուծումը տեսնում են կամ խաղաղ ճանապարհով, կամ ուժի կիրառմամբ:

Կրթական մակարդակ - նախնական, միջնակարգ և բարձրագույն

Ընտանիքում երեխաների իդեալական թվի պատկերացումներ - 1- 0-2, 2- 3, 3 -4+

Ամուսնական կարգավիճակ – 1. ամուրի, 2. ամուսնացած

Անձնական եկամուտ – 1. ցածր, 2. միջին, 3. բարձր


Տնային տնտեսության անդամների թիվը - 1. փոքր, 2. միջին, 3. մեծ

Զբաղվածության մակարդակ – 0. գործազուրկ, 1. զբաղված  
Տարիք

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում խաղաղ ճանապարհով լուծման կողմնակից հայաստանաբնակ կնոջ տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում 3 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, գործազուրկ և 48 տարեկան կին (Նկար 1.):

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում խաղաղ ճանապարհով լուծման կողմնակից ադրբեջանաբնակ կնոջ տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում մինչև 2 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, գործազուրկ և 44 տարեկան կին (Նկար 1.):


Նկար 1. Հայաստանում և Ադրբեջանում կնոջ տիպական կերպարը, խաղաղություն



Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում խաղաղ ճանապարհով լուծման կողմնակից հայաստանաբնակ տղամարդու տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում 3 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, զվաղրված և 49 տարեկան տղամարդ (Նկար 2.):

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում խաղաղ ճանապարհով լուծման կողմնակից ադրբեջանաբնակ տղամարդու տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում մինչև 2 երեխա ունեցող, ամուսնացած, ցածր եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, զբաղված և 41 տարեկան կին (Նկար 2.):

Նկար 2. Հայաստանում և Ադրբեջանում տղամարդու տիպական կերպարը, խաղաղություն




Հետազոտության նպատակներից ելնելով ուսումնասիրվել են նաև ուժի կիրառմամբ հիմնահարցի լուծման կողմնակից կանանց և տղամարդկանց տիպական կերպարները:

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում ուժի կիրառմամբ լուծման կողմնակից հայաստանաբնակ կնոջ տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում 3 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, զբաղված և 47 տարեկան կին (Նկար 3.):

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում ուժի կիրառմամբ լուծման կողմնակից ադրբեջանաբնակ կնոջ տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում մինչև 2 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, զբաղված և 44 տարեկան կին (Նկար 3.):


Նկար 3. Հայաստանում և Ադրբեջանում կնոջ տիպական կերպարը, ուժի կիրառում



Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում ուժի կիրառմամբ լուծման կողմնակից հայաստանաբնակ տղամարդու տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում 3 երեխա ունեցող, ամուսնացած, միջին եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, գործազուրկ և 49 տարեկան տղամարդ (Նկար 4.):

Ղարաբաղյան հիմնահարցը առաջիկա 5 տարվա ընթացքում ուժի կիրառմամբ լուծման կողմնակից ադրբեջանաբնակ տղամարդու տիպական կերպարը ենթադրում է միջնակարգ կրթություն, իդեալում ընտանիքում մինչև 2 երեխա ունեցող, ամուսնացած, բարձր եկամուտ ունեցող, տնային տնտեսությունում 1-3 անդամ ունեցող, գործազուրկ և 41 տարեկան կին (Նկար 4.):

Նկար 4. Հայաստանում և Ադրբեջանում տղամարդու տիպական կերպարը, ուժի կիրառում



## Հիպոթեզի ստուգում

Հետազոտության հիպոթեզը կայանում էր հետևյալում. կանայք ավելի են հակված խաղաղությանը լուծել Ղարաբաղյան հիմնահարցը աջաջիկա 5 տարվա ընթացքում, քան տղամարդիկ: Կիրառելով Պիրսոն Խի քառակուսի մեթոդը՝ կարելի է պնդել, որ Հայաստանի պարագայում տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ (Թեսթ 1.), մինչդեռ Ադրբեջանում այն վիճակագրորեն նշանակալի է (Թեսթ 2.):

Թեսթ 1.

<b>Armenia</b>		<b>Force</b>	<b>Peace</b>	<b>Total</b>
<b>Male</b>	<b>Count</b>	<b>142</b>	<b>533</b>	<b>675</b>
	<b>%</b>	<b>21.0%</b>	<b>79.0%</b>	<b>100.0%</b>
<b>Female</b>	<b>Count</b>	<b>137</b>	<b>595</b>	<b>732</b>
	<b>%</b>	<b>18.7%</b>	<b>81.3%</b>	<b>100.0%</b>
		<b>Value</b>	<b>df</b>	<b>Asymp. Sig. (2-sided)</b>
<b>Pearson Chi-Square</b>		<b>1.190<sup>a</sup></b>	<b>1</b>	<b>.275</b>

Թեսթ 2.

<b>Azerbaijan</b>		<b>Force</b>	<b>Peace</b>	<b>Total</b>
<b>Male</b>	<b>Count</b>	<b>275</b>	<b>287</b>	<b>562</b>
	<b>%</b>	<b>48.9%</b>	<b>51.1%</b>	<b>100.0%</b>
<b>Female</b>	<b>Count</b>	<b>184</b>	<b>282</b>	<b>466</b>
	<b>%</b>	<b>39.5%</b>	<b>60.5%</b>	<b>100.0%</b>
		<b>Value</b>	<b>df</b>	<b>Asymp. Sig. (2-sided)</b>
<b>Pearson Chi-Square</b>		<b>9.201<sup>a</sup></b>	<b>1</b>	<b>.002</b>

Նույն մեթոդի կիրառմամբ ստուգվել է նաև տղամարդկանց ընկալումների տարբերությունը Հայաստանում և Ադրբեջանում: Արդյունքում պարզվել է, որ հայաստանաբնակ տղամարդիկ ավելի են հակված հիմնահարցի խաղաղ լուծման, քան ադրբեջանաբնակ տղամարդիկ (Թեսթ 3.): Նույն պնդումը ճիշտ է նաև հայաստանաբնակ և ադրբեջանաբնակ կանանց վերաբերյալ՝ հայաստանաբնակ կանայք ավելի են հակված հիմնահարցը լուծել խաղաղ ճանապարհով, քան ադրբեջանաբնակ կանայք (Թեսթ 4.):

Թեւոյ 3.

<b>Men</b>					
		<b>Force</b>	<b>Peace</b>	<b>Total</b>	
<b>Armenia</b>	<b>Count</b>	<b>142</b>	<b>533</b>	<b>675</b>	
	<b>%</b>	<b>21.0%</b>	<b>79.0%</b>	<b>100.0%</b>	
<b>Azerbaijan</b>	<b>Count</b>	<b>275</b>	<b>287</b>	<b>562</b>	
	<b>%</b>	<b>48.9%</b>	<b>51.1%</b>	<b>100.0%</b>	
		<b>Value</b>	<b>df</b>	<b>Asymp. Sig. (2-sided)</b>	
<b>Pearson Chi-Square</b>		<b>106.788<sup>a</sup></b>	<b>1</b>	<b>.000</b>	

Թեւոյ 4.

<b>Women</b>					
		<b>Force</b>	<b>Peace</b>	<b>Total</b>	
<b>Armenia</b>	<b>Count</b>	<b>137</b>	<b>595</b>	<b>732</b>	
	<b>%</b>	<b>18.7%</b>	<b>81.3%</b>	<b>100.0%</b>	
<b>Azerbaijan</b>	<b>Count</b>	<b>184</b>	<b>282</b>	<b>466</b>	
	<b>%</b>	<b>39.5%</b>	<b>60.5%</b>	<b>100.0%</b>	
		<b>Value</b>	<b>df</b>	<b>Asymp. Sig. (2-sided)</b>	
<b>Pearson Chi-Square</b>		<b>62.616<sup>a</sup></b>	<b>1</b>	<b>.000</b>	